ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշենի համայնքապետարան, գ. Նորաշեն
հեռ.093475448 էլ. փոստ norashen.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» հուլիսի 2017 թվականի թիվ 42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Նորաշեն համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 07-ի թիվ 14-Ն որոշումը՝

որոշում եմ.

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Նորաշենի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման համամասնությունների եռամսյակային բաշխումը՝ ըստ հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Նորաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 25-ի «ՀՀ Լոռու մարզի Նորաշենի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունների սահմանելու մասին» թիվ 2 որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան